ՄԱՐՏՈՒՆՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ ՊՓԲԸ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԾՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/03

ք. Մարտունի <<10>> սեպտեմբեր 2021թ.

<<Մարտունու Ծննդատուն >> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Կոնցեռն –Էներգոմաշ ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդինմատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագիր-գնմանժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունել ապրանքընվճարելդրահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդ[illegible] դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախ[illegible] դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մաս[illegible] Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամի[illegible] ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 697 040 /մեկ միլիոն վեց հարյուր ինսունյոթ հազար քառասուն/** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:18291Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական
միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են

[18] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկներներկայացվելէառանցԱԱՀ-ի, ապապայմանագիրընքելիս «ներառյալԱԱՀ-ն»*

ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ 2, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[20]312

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21]213Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[20] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվ
Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար
նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթ
սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կա
ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի
ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջԷմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնտրցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

8.8 Ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմինչևպայմանագրով այդժամկետըլրանալը՝Վաճառողիառաջարկությանառկայությանդեպքում,պայմանով, որԳնորդիմոտչիվերացելապրանքիօգտագործմանպահանջը,իսկՎաճառողիառաջարկությունըներկայացվելէոչ

[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

ուշ, քանպայմանագրովիսկզբանեմատակարարմանհամարսահմանվածժամկետըլրանալուցառնվազն 5 աշխատանքային օրառաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայցոչավելքանպայմանագրովսահմանվածժամկետնէ:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը
Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ ՊՓԲԸ	<Կոնցեռն-Էներգոմաշ> ՓԲԸ
Արդշինբանկ Մարտունու ՓԲԸ	ք.Երևան, Արզումանյան 32-10
Հ/2247660032001	<էյչ էս Բի Սի բանկ Հայաստան> ՓԲԸ
ՀՎՀՀ208202815	Հ/Հ 217002182558001
Տնօրեն Հովհաննիսյան	ՀՎՀՀ 01210095
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Բանակցությունների դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 10 » սեպտեմբեր 2021 թ. կնքված
ՄՕՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
11	33211150/3	Միզանյութ	UREA 400T cobas c 111 Roche Diagnostics	Միզանյութ (Urea, cobas c111) Կոբաս c111 անալիզատորի համար: Ֆորմատ՝4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,	տուփ	24600	123000	5	Մարտունի Գետափնյա 52	5	Նախատեսվում է գնել 2021 թ-ի ընթացքում,ընդորում մինչև դեկտեմբեր ամսվա 25 ներառյալ : Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում հիվանդների փաստացի թվաքանակը: Ապրանքների մատակարարումն
12	33211120/4	Գլյուկոզա	Glucouse 400T c 111 Roche Diagnostics	Գլյուկոզա (Glucose HK cobas c111): Կոբաս c111 անալիզատորի համար: Ֆորմատ՝4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,	տուփ	21960	87840	4	Մարտունի Գետափնյա 52	4	
17	33211160/1	Կրեատինին	Creatinin Jaffe 400t c111 Roche Diagnostics	Կրեատինին (creatinin jaffe, cobas c111): Կոբաս c111 անալիզատորի համար: Ֆորմատ՝4x100 թեսթ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման	տուփ	25200	25200	1	Մարտունի Գետափնյա 52	1	

				պայմանները 15-25 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,							իրականացնում Մատակարարը: ք.Մարտունի Գետափյա 52 , հասցեով:
20	33691162/8	Լուպուս անտի-կոագուլանտների (PTT-LA) որոշման հավաքածու	PTT-LA Diagnostics stago	Լուպուս կոագուլանտների որոշման թեստ հավաքածու: Ֆորմատ՝ 6x2 մլ, 120 թեստ, եթե հետազոտությունը իրականացվի STart Max վերլուծիչի վրա՝ օգտագործելով ընկերության կողմից տրված SOP (standard operation procedure) փաստաթուղթը: Մեթոդ՝ մակարդելիության ժամանակի որոշումը մածուցիկության չափման հիման վրա: QR կոդի և շտրիխ կոդի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Ռեագենտը բացելուց հետո պահպանման պայմանները՝ 2-8C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostics:	տուփ	47880	95760	2	Մարտունի Գետափնյա 52	2	
21	33691162/9	Կալցիումի քլորիդի լուծույթ STA CaCL2, 24x15 մլ	STA CACL20<02 5M Diagnostics stago	STart Max վերլուծիչների համար նախատեսված STA CaCL2, 0.025 Մ: Ֆորմատ՝ 24 x 15մլ տուփում/հատ: Պահպանման պայմանները 2-25°C ջերմաստիճանում: Պիտանիության ժամկետի առնվազն 50%-ի առկայություն մատակարարման պահին: Չօգտագործված: QR կոդի և շտրիխ կոդի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Արտադրողի կողմից տրված որակի վերահսկման միջազգային հավաստագրեր՝ ISO 9001, ISO 13485, CE (Conformitn Europnene):	տուփ	44400	44400	1	Մարտունի Գետափնյա 52	1	
22	33691162/10	Նոսրացնող հեղուկ NaCl 9%	NaCAL 9% c 111 Roche Diagnostics	NaCl 9% Diluent: Կոբաս c111 անալիզատորի համար: Ֆորմատ՝4x12 մլ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն,	տուփ	19560	19560	1	Մարտունի Գետափնյա 52	1	
25	33691162/13	Ախտահանող հեղուկ	STA DESORB U Diagnostics	STart Max վերլուծիչի համար նախատեսված / 24X15մլ: Ֆիրմայի նշանի առկայություն: Պահպանման	տուփ	84000	84000	1	Մարտունի Գետափնյա 52	1	

			stago	պայմանները՝ 2-8 C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2,							
26	33691162/15	Սելպակ 10 լ	CELLPACK 10L Sysmex	KX-21 N, XS- 500i , XS 1000i, XP-300 և XT 4000i հեմատոլոգիական անալիզատորների համար Ֆորմատ՝ 10 Լիտր;Ստուգող նմուշ՝Երակային և մազանոթային արյուն;Ֆիրմային նշանի առկայությունը;Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում , Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3 , For In Vitro Diagnostic. ISO 9001:2008, ISO 13485:2005, CE, TUV և ռեագենտի արտադրանքի որակի սերտիֆիկատի առկայությունը::	տուփ	24000	240000	10	Մարտունի Գետափնյա 52	10	
27	33691162/16	Ստրոմատոլայզեր WH	STROMATOLYSER-WH 3X500ML Sysmex	Ստրոմատոլայզեր WH (STROMATOLYSER -WH) XP-300 և KX-21 N հեմատոլոգիական անալիզատորի համար:Ֆորմատ՝ 3X500 մլ.:Ստուգող նմուշ՝ Երակային և մազանոթային արյուն:Ֆիրմային նշանի առկայությունը:Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3,առկայություն	տուփ	144000	432000	3	Մարտունի Գետափնյա 52	3	
28	33691162/17	Սելկլին	Cellclean 50ML Sysmex	Սելկլին (Cellclean) մաքրող նյութ pocH 100i, KX-21 N, XS- 500i , XS 1000i,XT 4000i և XP-300 հեմատոլոգիական անալիզատորների համար Ֆորմատ՝ 50 մլ:Ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում, Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3- ի առկայություն:	տուփ	51000	153000	3	Մարտունի Գետափնյա 52	3	
29	33691162/18	Լվացող հեղուկ նախատեսված cobas c111 սարքի համար	Cobas Integra Cleaner Roche Diagnostics	Լվացող հեղուկ կոբաս c111 անալիզատորի համար, Ֆորմատ՝1000 մլ: Ֆիրմային նշանի առկայությունը: Պահպանման պայմանները սենյակային աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 2/3	հատ	15720	62880	4	Մարտունի Գետափնյա 52	4	

				առկայություն, For In Vitro Diagnostic only							
32	33691162/21	Դեպրոտեին իզացնող հեղուկ նախատեսված cobas c111 սարքի համար	ISE DEPROTEINIZER c 111 Roche Diagnostics	Deproteinizer: Կոբաս c111 անալիզատորի համար: Ֆորմատ՝2 x 11մլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic only	Տուփ	8880	44400	5	Մարտունի Գետափնյա 52	5	
33	33691162/22	Կալիբրատոր նյութ նախատեսված բիոքիմիական թեստերի համար	Cfas 12x3ml Roche Diagnostics	Calibrator f.a.s.: Կոբաս ինտեգրա և Կոբաս c111 անալիզատորների համար: Ֆորմատ՝ 12 x 3 մլ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only	Տուփ	46560	46560	1	Մարտունի Գետափնյա 52	1	
34	33691162/23	Կալիբրատոր նյութ պրոտեիններ, նախատեսված բիոքիմիական թեստերի համար	Cfas Proteins Roche Diagnostics	Կալիբրատոր նյութ պրոտեիններ (Calibrator f.a.s. Proteins) նախատեսված Կոբաս c111 սարքի համար: Ֆորմատ՝5 x 1 մլ: Ֆիրմային նշանի առկայությունը պարտադիր է: Պահպանման պայմանները 2-8 աստիճան ջերմություն: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2 առկայություն, For In Vitro Diagnostic only	Տուփ	125880	125880	1	Մարտունի Գետափնյա 52	1	
35	33691162/24	Օուրեն-Կոլլեր բուֆֆերային նյութ	STA OWREN KOLLER Diagnostics stago	STart Max վերլուծիչի համար նախատեսված /STA-OWREN-KOLLER/: Ֆորմատ՝ 24x15մլ: Օգտագործվում է որպես նոսրացնող հեղուկ՝ ֆիբրինոգեն, պրոթրոմբինային ժամանակ հետազոտությունների համար: Ֆիրմային նշանի առկայություն: QR կոդի և շտրիխ կոդի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8 C ջերմաստիճանում մինչ ժամկետի ավարտը: Հանձնելու պահին	տուփ	49320	49320	1	Մարտունի Գետափնյա 52	1	

				պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostic:							
36	33691162/25	Յունիկալիբրատոր կալիբրացիայի պլազմա	UNICALIBRATOR Diagnostics stago	STart Max վերլուծիչի համար նախատեսված Յունիկալիբրատոր /UNICALIBRATOR/, Ֆորմատ՝ 6x1մլ: Օգտագործվում է որպես կալիբրատոր պրոթրոմբինային ժամանակ և ֆիբրինոգեն հետազոտությունների համար: QR կոդի և շտրիխ կոդի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանիության ժամկետի 1/2, For In Vitro Diagnostics: Արտադրողի կողմից տրված որակի վերահսկման միջազգային հավաստագրեր՝ ISO 9001, ISO 13485, CE (Conformité Européene):	տուփ	63240	63240	1	Մարտունի Գետափնյա 52	1	

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում:Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը» սյունակը:Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ: Արտադրողի կողմից տրված՝ որակի վերահսկման միջազգային հավաստագրեր՝ ISO 9001, ISO 13485, CE (Conformité Européene):

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" 22 օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ ՊՓԲԸ
Մարդշինբանկ Մարտունու ՓԲԸ
2/2247660032001
ՀՎ22208202815
Վերոնիկա Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<Կոնցեռն-Էներգոմաշ> ՓԲԸ
ք.Երևան, Արզումանյան 32-10
<Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան> ՓԲԸ
2/2 2170021825580001
ՀՎ22 01210095

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
« 10 » սեպտեմբեր ի 2021 թ. կնքված
ՄՕՊՓԲԸ-ԳՀԱՊՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանովն ախատեսվածմիջոցի ցիկծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
11	33211150/3	Միզանյութ	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	30750	30750	30750	30750	123000
12	33211120/4	Գլյուկոզա	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	21960	21960	21960	21960	87840
17	33211160/1	Կրեատինին	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	6300	6300	6300	6300	25200
20	33691162/8	Լուպուս անտի-կոագուլանտների (PTT-LA) որոշման հավաքածու	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	23940	23940	23940	23940	95760
21	33691162/9	Կալցիումի քլորիդի լուծույթ STA CaCL2, 24x15 մլ	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	11100	11100	11100	11100	44400

22	33691162/10	Նոսրացնող հեղուկ NaCl 9%	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	4890	4890	4890	4890	19560
25	33691162/13	Ախտահանող հեղուկ	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	21000	21000	21000	21000	84000
26	33691162/15	Սելպակ 10 լ	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	60000	60000	60000	60000	240000
27	33691162/16	Ստրոմատոլայզեր WH	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	108000	108000	108000	108000	432000
28	33691162/17	Սելկլին	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	38250	38250	38250	38250	153000
29	33691162/18	Լվացող հեղուկ նախատեսված cobas c111 սարքի համար	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	15720	15720	15720	15720	62880
32	33691162/21	Դեպրոտեինիզացնող հեղուկ նախատեսված cobas c111 սարքի համար	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	11100	11100	11100	11100	44400
33	33691162/22	Կալիբրատոր նյութ նախատեսված բիոքիմիական թեստերի համար	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	11640	11640	11640	11640	46560
34	33691162/23	Կալիբրատոր նյութ պրոտեիններ, նախատեսված բիոքիմիական թեստերի համար	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	31470	31470	31470	31470	125880

35	33691162/24	Օուրեն-Կոլլեր բուֆֆերային նյութ	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	12330	12330	12330	12330	[illegible]
36	33691162/25	Յունիկալիբրատոր կալիբրացիայի պլազմա	... %	... %	... %	... %	... %	... %	%	;;՛ %	15810	15810	15810	15810	63240

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ԾՆՆԴԱՏՈՒՆ ՊՓԲԸ
Արդշինբանկ Մարտունու ՓԲԸ
Հ/Հ247660032001
ՀՎՀՀ08202815
Արթուր Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<Կոնցեռն-Էներգոմաշ> ՓԲԸ
ք.Երևան, Արզումանյան 32-10
<Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան> ՓԲԸ
Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 01210095

/ստորագրություն/
Կ.Տ